կամ կանխիկ փողի ձևով, նույն կերպ՝ տարբերվում են նաև հայտի և որակավորման ապահովման տեսակները, այնինչ վիճարկվող որոշումը չի պարունակում նշում հայցվորի կողմից ներկայացված պայմանագրի ու որակավորման ապահովումների տեսակները սխալ ընտրված լինելու մասին, այլ՝ նշված է, որ դրանք առհասարակ չեն ներկայացվել, որպիսի պնդումն արդեն իսկ հերքվեց վերոնշյալ հիմնավորմամբ:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշումն ընդունվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի խախտմամբ, ուստի հայցը հիմնավոր է, ենթակա է բավարարման և պետք է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի 15.11.2022թ. թիվ 3939-Ա որոշումը՝ Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով:

Դատական ծախսերից պետական տուրքի բաշխման հարցի լուծում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի բնության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ հայցադիմումի համար օրենքով սահմանված չափով պետական տուրքը հայցվորի կողմից նախապես վճարվել է, իսկ հայցը բավարարվում է, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 50,000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հայցի ապահովման միջոցի պահպանման մասով.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը բավարարվում է՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 18.01.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի կատարումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

<>Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի>> ԱՁ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի 15.11.2022թ. թիվ 3939-Ա որոշումը՝ Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի 15.11.2022թ. թիվ 3939-Ա որոշումը՝ <<Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի>> ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով:

Երևանի քաղաքապետարանից հօգուտ <<Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի>> ԱՁ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 18.01.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ